84 գիտնական՝ ԳԱԱ ընտրություններին

84 գիտնական կմասնակցի ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների եւ թղթակից անդամների ընտրություններին: Ընտրությունները տեղի կունենան դեկտեմբերի 27-28-ին՝ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի ընթացքում: Այս մասին դեկտեմբերի 2-ին հայտնեց ՀՀ ԳԱԱ Նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը: Ակադեմիկոսների 6 թափուր տեղի համար հայտ է ներկայացրել 11 գիտնական, իսկ թղթակից անդամների 22 թափուր տեղի համար՝ 73:

ՀՀ ԳԱԱ Նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ ընտրությունների անցկացման անհրաժեշտությունը վաղուց էր հասունացել ինչպես ժամկետների պահպանման, այնպես էլ ակադեմիայի կորուստների առումով: 2003 թվականից կյանքից հեռացել են 40 ակադեմիկոս եւ թղթակից անդամ, սակայն ընտրությունները ավելի շուտ չեն անցկացվել, քանի որ 2008-2009 թվականների ֆինանսական ճգնաժամի պատճառով պետական բյուջեից անհրաժեշտ միջոցներ չեն տրամադրվել ակադեմիկոսների եւ թղթակից անդամների պատվովճարների համար: Մամուլի ասուլիսին Ռ. Մարտիրոսյանը ներկայացրեց հիմնական պահանջները, որոնք ներկայացվում են առաջադրված թեկնածուներին: Ըստ ԳԱԱ Նախագահի, բացի խոշոր գիտական ձեռքբերումներից, ուշադրություն է դարձվում նրանց գիտական աշխատությունների համապատասխանությանը այն առաջնահերթություններին, որոնք անհրաժեշտ է զարգացնել մեր երկրում, ինչպես նաեւ կրթության ոլորտում նրանց վաստակին: